

Փաստ. անվանումը	ԵՄՀ ուսանողի վարքագծի կանոններ
Փաստ. N	ԵՄՀ/ԸԿ/ՄՍ-15-01
Հաստատման ամսաթիվը	2009
Արձանագրության N	
Հաստատող մարմինը	Գիտական խորհուրդ
Մշակող	Մեթոդական խորհուրդ
Ներդրման/իրականացման պատասխանատու	Ուսումնամեթոդական և գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր



Փաստաթղթի փոփոխությունները

Ամսաթիվ	Կատարված փոփոխություն	Անուն, ազգանուն, պաշտոն, Ստորագրություն
06/02/2018	Կարգը մասնակիորեն փոխվել է	Մուրեն Օհանյան, Գիտական խորհրդի նախագահ



1. Ընդհանուր դրույթներ

1.1. Ուսանող է համարվում այն անձը, ով ռեկտորի հրամանով ընդունվել է Համալսարան, որպես սովորող առկա կամ հեռակա բաժնում:

1.2. Ուսանողի վարքագծի կանոնները բարոյականության համընդհանուր սկզբունքների վրա հիմնված և ուսումնական հաստատությունների առանձնահատկությունների հաշվառմամբ վարվելակերպի և փոխահարաբերությունների առանձնահատկությունները սահմանող նորմեր են:

2. ԵՄՆ սովորողի պարտականությունները

2.1 Կատարել կրթական ծրագրերի պահանջները՝ հաճախել պարտադիր ուսումնական պարապմունքներին, կատարել ուսումնական պլանով նախատեսված բոլոր պարտականությունները:

2.2 Կատարել ՀՀ օրենսդրության, ԵՄՆ կանոնադրության, ներքին կարգապահական կանոնների բոլոր պահանջները:

2.3 Ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում հանձնել բոլոր ստուգարքներն ու քննությունները:

2.4 Հոգատարությամբ վերաբերվել ԵՄՆ-ի գույքին, պատճառած վնասի համար կրել նյութական պատասխանատվություն:

2.5 Բարձր պահել ԵՄՆ-ի պատիվն ու հեղինակությունը:

2.6 Լինել կարգապահ, ԵՄՆ-ի ուսումնական և այլ կառույցներում պահպանել մաքրություն:

2.7 Հարգելի պատճառով պարապմունքներին չներկայանալու դեպքում սովորողը պարտավոր է հաջորդ իսկ օրը տեղյակ պահել ամբիոնին, իսկ ներկայանալու առաջին իսկ օրը տվյալներ ներկայացնել պարապմունքներին չմասնակցելու պատճառների մասին:

2.8 Լինել հարգալից և բարեկիրթ ուսանող-ընկերների, դասախոսների և Համալսարանի ղեկավարության նկատմամբ:

2.9 Պատշաճ հագուստով և արտաքինով ներկայանալ համալսարան:

2.10 Պահպանել բարոյական այլ նորմերի պահանջները:

3. ԵՄՆ ուսանողի վարքագիծը լսարանում

3.1. Ուսումնական պարապմունքների սկիզբ է համարվում ժամը 9 30 : 10 րոպեից ավել ուշանալու դեպքում դասախոսը իրավունք ունի չթույլատրել ուսանողին մասնակցելու դասին:

3.2. Ուսումնական պարապմունքների բնականոն ընթացքը չխաթարելու համար պարապմունքների սկսվելուց հետո պետք է շենքում ապահովվի լռություն և

կարգապահություն: Չի թույլատրվում ընդհատել պարապմունքները, դրանց անցկացման ժամանակ մտնել լսարան և դուրս գալ լսարանից

3.3. Լսարաններում դասընթացի ժամանակ արգելվում է բջջային հեռախոսների կամ ժամանակակից կապի այլ միջոցների օգտագործումը, բացառությամբ՝ ուսումնական նպատակներով նման միջոցների օգտագործման անհրաժեշտության:

4. Համալսարանի շենքում արգելվում է՝

- գույքը վնասել
- ծխել
- ալկոհոլային խմիչքներ օգտագործել
- ալկոհոլային կամ այլ հարբածության վիճակով ներկայանալ, կամ դասերին մասնակցել
- թղթախաղով զբաղվել
- առանց վարչակազմի թույլտվության տեղաշարժել գույքը
- պատերի վրա դաջվածքներ կատարել
- ներկայնալ սպորտային հագուստով

5. Վարքագծի կանոնները խախտելու դեպքում տույժերի կիրառումը 5.1.Սովորողների կողմից ՀՀ օրենսդրությամբ, ԵՄՀ կանոնադրությամբ նախատեսված պարտականությունների, ներքին կարգապահության կանոնների և սույն վարքագծի կանոնների խախտման դեպքում նրա նկատմամբ կիրառվում են հետևյալ կարգապահական տույժերը.

- նկատողություն
- խիստ նկատողություն
- հեռացում համալսարանից

5.2. Համալսարանի ներսում կամ չթույլատրված տարածքում ծխելու դեպքում ուսանողը տուգանվում է 5000 դրամի չափով:

5.3. Կիրառված կարգապահական տույժերի մասին տեղեկացվում է ուսանողներին:

5.4. Մինչև կարգապահական տույժի կիրառումը ուսանողից պահանջվում է գրավոր բացատրություն:

5.5. Կարգապահական տույժը կարող է կիրառվել արարքի բացահայտումից ոչ ուշ, քան մեկ ամսվա և կատարումից ոչ ուշ, քան վեց ամսվա ընթացքում չհաշված ուսանողի հիվանդության կամ արձակուրդի մեջ գտնվելու ժամանակահատվածը: Եթե կարգապահական տույժի ենթարկվելու օրվանից հետո մեկ ուսումնական տարվա ընթացքում ուսանողը չի ենթարկվել նոր կարգապահական տույժի, ապա դա համարվում է մարված: